## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ "ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ"ՀՈԱԿ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի
Մարզի գ. Լեռնանիստ
հեռ. (094) 84-65-95

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/3 գնման

Ընթացակարգի բոլոր մասնակիցներին

Հարգելի մասնակից,

*ԿՄԼՄՀ-ՇՀԱՊՁԲ11/3* ծածկագրով ընթացակարգի շրջանակներում, "Լեռնանիստ համայնքի մանկապարտեզ"ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված N*ՇՀԱՊՁԲ11/3* շրջանակային համաձայնագրով նախատեսված սննդամթերք: Ապրանքների մատակարարման պայմաններնեն համաձայն առաջարկված պայմանագրի նախագծի:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղ հասցեյում գործող , "Լեռնանիստ Համայքի մանկապարտեզ"ՀՈԱԿ–ում

Ս. Բաղդասարյանին. մինչև 2015թ. Ապրիլի 13 –ը ժամը 13:00-ը:

Հայտերը կբացվեն "Լեռնանիստ համայնքի մանկապարտեզ"ՀՈԱԿ–ի, Լեռնանիստ գյուղի հասցեում 2015թ. Ապրիլի 13 –ը ժամը 13:00-ը:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել

*ՇՀԱՊՁԲ11/2 ընթացակարգի* հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ(լրացուցիչ) փաստաթղթեր տվյալներ, ապա նշված փաստաթղթերը կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը մինչև կարգի 110-րդ 7–րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդորում`

Գնման փաստաթղթերի և տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով` հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասիևկարգի 75-րդ կետի պահանջները, նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատու իկողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)` հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Մատակարարման պայմաններն են՝ ապրանքը պետք է մատակարարվի համապատասխան տեխնիկական բնութագրերին, նախատեսված ծավալներով և ժամկետներում: Վաճառողը պետք է ապահովի ապրանքի տեղափոխումը իր միջոցներով :

Միաժամանակ տեղեկացվում է, որ գնման նախնական պայմանագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնայինառաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք, շահույթ և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով և մասնակցի հայտարարությունը մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանության և գրանցման պահից հետո դրանց առկայության, ինչպես նաև հրավերով սահմանված տեխնիկական հատկանիշներին համապատասխան ապրանքի մատակարարման մասին: Գնային առաջարկը ներկայացվում է փակ՝ սոսնձված ծրարով, որի վրա կատարվում են հետևյալ գրառումները՝

ա/ “Գնային առաջարկ” բառերը.

բ/ ընթացակարգի ծածկագիրը

գ/ “Չբացել մինչև գնային առաջարկների բացման նիստը” բառերը.

դ/ մասնակցի անվանումը /անունը/, գտնվելու վայրը և հեռախոսահամարը,

ե/ պատվիրատուի անվանումը /անունը/, գտնվելու վայրը:

Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և մեկ օրինակ պատճենից, ընդ որում բնօրինակ փաթեթում ներառված պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը պետք է կնքված և ստորագրված լինեն մասնակցի կողմից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են Բնօրինակ և Պատճեն բառերը:

Էլեկտրոնային եղանակով ծանուցման դեպքում ծանուցման ստացման ավտոմատ եղանակով հետ հաստատումը պարտադիր է:

Փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը փաստաթղթերը հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ փաստաթղթերը ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված /սկանավորված/ տարբերակով:

Մեր էլեկտրոնային հասցեն՝lernanist-mank@rambler.ru

“ԼԵՌՆԱՆԻՍՏՄԱՆԱԿԱՊԱՐՏԵԶ” ՀՈԱԿ

ՏՆՕՐԵՆ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ